

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ Ա Վ ՈՒ Շ Ի Մ Ա Ր Ձ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26-ը փետրվարի 2014թ.

Ք. Իջևան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2014թ. փետրվարի 26-ին ժ.13⁰⁰-ին կայացած մարզխորհրդի նիստի

1. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ – ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ Զ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ

26.02.2014թ.

ք.Իջևան

Նիստը վարում էր մարզպետ Ա.Ղուլարյանը:
Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 60-ը:
Մասնակցում էին.

- Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պետ Վ.Գասպարյանը
- ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները
- ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը
- ՀՀ Տավուշի մարզի դատախազը
- ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի նախագահը
- 3-րդ բանակային կորպուսի հրամանատարը
- ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության պետը
- ՀՀ ոստիկանության Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի բաժինների պետերը
- Տարածաշրջանի զինկոմները
- Դպրոցների տնօրենները, դպրոցների զինղեկները
- Բուժհաստատությունների տնօրենները
- Մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետերը, բաժինների վարիչները
- Ուսանողներ, հյուրեր:

Ողջույնի խոսքով նիստը բացեց մարզպետ Ա.Ղուլարյանը: Նա նշեց, որ ՀՀ ոստիկանության տարածքային մարմինների, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության համակարգման ուղղությամբ կազմակերպվել են բոլոր ոլորտներին վերաբերվող տարաբնույթ հարցերի քննարկումներ:

ՀՀ ոստիկանություն - Տավուշի մարզպետարան - մարզի համայնքներ գործունե համագործակցության արդյունքում լուրջ աշխատանքներ են տարվել ՀՀ ոստիկանության կողմից բնակչության պետական ռեգիստրի հիման վրա մարզում հաշվառված բնակչության թվաքանակի գծով ելակետային տվյալների ճշտման ուղղությամբ:

Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և ոստիկանության Տավուշի մարզային վարչության անչափահասների գործերով տեսուչների համատեղ աշխատանքի շնորհիվ էականորեն նվազել է պրոֆիլակտիկ հաշվառման մեջ գտնվող անչափահասների թիվը: 2012թ. հաշվառման մեջ գտնվող 14 անչափահասի փոխորեն 2013թ. հաշվառվել է 4 անչափահաս: Միջոցառումներ են իրականացվել անչափահասների կյանքի և դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող հանգամանքների, հանցագործություն ծնող պատճառների և պայմանների վերացման ուղղությամբ:

Մարզպետ Ա.Ղուլարյանը նշեց նաև, որ ՀՀ կառավարության 2008 թվականի մարտի 27-ի թիվ 1039-Ն որոշմամբ հաստատված հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրով նախատեսված միջոցառումները իրականացվում են ՀՀ Տավուշի մարզպետարանի, Ոստիկանության մարզային վարչության համապատասխան ստորաբաժանման և հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերով:

Մարզում գործում է «Տավուշի մարզի երիտասարդական կենտրոն»-ը: Մարզպետարանի, երիտասարդական կենտրոնի և ոստիկանության Տավուշի մարզային վարչության «Անչափահասների գործերով խմբի» աշխատակիցների համագործակցությամբ կազմակերպվել են երաժշտական փառատոններ, հրավիրվել են սեմինար-խորհրդակցություններ՝ առողջ ապրելակերպի, դպրոցահասակ երեխաների շրջանում իրավական մակարդակի բարձրացման, բնապահպանական և քաղաքացիական ակտիվության խնդիրների վերաբերյալ: Մարզպետարանի, ոստիկանության և երեխաների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների համատեղ ջանքերով մարզի չորս տարածաշրջաններում ստեղծվել են «Պատանի իրավաբաններ» ակումբներ:

Ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ապօրինի զենք- զինամթերքի պահպանման, ծառահատման, հողազավթումների և որսագողությունների ժամանակ ոստիկանության և մարզպետարանի քայլերը եղել են օպերատիվ, որոնց շնորհիվ պակասել են նման օրինախախտումները: Խնդիրները քննարկվել են մարզխորհրդի և մարզպետի մոտ հրավիրված նիստերի, ինչպես նաև ոստիկանության բաժիններում եռամսյակը մեկ հրավիրված խորհրդակցությունների օրակարգերում: Մշտապես հետևողական բացատրական աշխատանք է տարվում նաև բնակչության շրջանում:

Մարզխորհրդի և մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերում, անհրաժեշտության դեպքում Տավուշի մարզային վարչության կողմից ակտիվ մասնակցություն է ցուցաբերվում զինծառայությունից խուսափողներին հայտաբերելու և զինկոմիսարիատ ներկայացնելու գործում: Ոստիկանության հետ ակտիվ համագործակցության արդյունքում տարածքային զինկոմիսարիատներում նվազագույնի են հասցվում խուսափողների թիվը, իսկ զորակոչային և կցագրման առաջադրանքները կատարվում են հնարավորինս առավելագույնը:

Զորակոչային տեղամասերում, ինչպես նաև զինակոչիկներին անվտանգ հավաքակայաններ տեղափոխելու կարգ ու կանոն հաստատելու գործում ոստիկանությունը մշտապես համագործակցել է զինկոմիսարիատների հետ:

2013թ մարզի համայնքներում զինվորական հաշվառում անցկացնելու ընթացքում ՀՀ ԶՈՒ Գլխավոր շտաբի հիմնական միջոցառումների պլանի համաձայն Իջևանի, Բերդի, Նոյեմբերյանի և Դիլիջանի տարածքային զինկոմիսարիատներում իրականացված զորահավաքային ուսումնավարժանքի օրերին բարձր պատասխանատվությամբ իրենց աջակցությունն են ցուցաբերել ոստիկանության աշխատակիցները:

Միաժամանակ մարզպետը նշեց Ոստիկանության կողմից առաջարկված լավ նախաձեռնության՝ համայնքային ոստիկանություն ստեղծելու միտքը, նշելով, որ համայնքային ոստիկանի հետ համատեղ աշխատանքը միանշանակ կտա իր դրական արդյունքը: Ժամանակին պրոֆիլակտիկ միջոցառումների շնորհիվ կարող են ավելի խորը ուսումնասիրել հանցագործություն ծնող պատճառները, որն էլ իր հերթին թույլ կտա ժամանակին կանխելու այն:

Մարզպետը նաև նշեց, որ համայնքային ոստիկանության համար բոլոր համայնքներում հատկացվել են ոստիկանի սենյակ:

Ավարտելով իր ելույթը, մարզպետ Ա.Ղուլարյանը հույս հայտնեց, որ այսուհետ ևս Ոստիկանության հետ մեր համատեղ աշխատանքը կծառայի ի նպաստ մեր ժողովրդի ներքին անվտանգությանը:

Ներկայացնելով, որ այսօր աշխատանքային այցով մեր մարզ է այցելել ՀՀ Ոստիկանության պետ Վ.Գասպարյանը, մարզպետը նշեց, որ այդ այցերի ընթացքում քննարկվում են մեզ հուզող բազմաբովանդակ հարցեր:

Ա.Ղուլարյանը նշեց նաև, որ Ոստիկանության պետի աշխատանքը կարևորվում և իր դրական ազդեցությունն է ունենում ոստիկանություն – հասարակություն կապը ամրապնդելու վրա, որ նման այցելությունները շատ կարևոր են մեզ համար:

Ելույթով հանդես եկավ ոստիկանության պետը. նշելով, որ իր այցի նպատակը հիմնականում

մարզերում դեռևս լիարժեք չկայացած համայնքային ոստիկանության խնդիրն է, դեռ շատ անելիքներ կան այդ ուղղությամբ: Առաջնահերթ ոստիկանության վերափոխման առաջին փուլն է: 3 տարվա ընթացքում պետք է այն հասցնել իր ամփոփված վիճակին: Նա նշեց, որ ոստիկանը միայնակ չի կարող խնդիրը լուծել, եթե հասարակությունն ու վերին օղակի աշխատողները չօգնեն նրան, համախմբված չլինեն: Ոստիկանության բաժինների պետերը ստացել են հանձնարարություն, որպեսզի մշտապես շփվեն ակտիվի հետ, համագործակցեն:

Ոստիկանության պետը անդրադարձավ նաև դպրոցներին, ծնող-դպրոց-աշակերտ փոխհարաբերությանը: Նա նշեց, որ բոլոր ավագ դպրոցները ունենալու են իրենց ոստիկանները, որոնք աշխատելու են հենց դպրոցում: Երևանում, Արարատում դա արդեն գործում է, Տավուշը երրորդն է: Արդեն ցուցումներ են տրվել, թե ինչպիսին պետք է լինի դպրոցի ոստիկանը: Նա նշեց, որ ոստիկանությունը ծառայելու է բոլորին, առաջնահերթ՝ ժողովրդին: Եվ այն, ինչ հանդուրժել են նախորդ տարիներին, այս տարի նման բան չի լինելու: Չեն հանդուրժվելու գյուղերում հրացանավոր մարդիկ, քաղաքացիները կարող են զանգահարել թե՛ զի՛ծ, որտեղ ոչ մի զանգ անպատասխան չի մնում: Ովքեր ունեն տանը անօրինական զենք, թող անպայման գրանցեն այն: Կարևորելով անչափահասների հետ տարվող աշխատանքները ոստիկանության համակարգում անչափահասների հետ տարվող աշխատանքների բաժինը արդեն դարձել է վարչություն: Ոստիկանության պետը խնդրեց բոլորին օգնել ոստիկանությանը, որպեսզի ոստիկանությունն էլ օգնի բոլորին:

Ներկայացվեց ոստիկանության համակարգի բարեփոխումների ընթացքը, որը ոստիկանական գործունեության մեջ ենթադրում է նոր սկզբունքներ, նոր մոտեցումներ, նոր մտածելակերպ ու մարտավարություն: Համակարգում տեղի ունեցող բարեփոխումների գործընթացում ոստիկանության պետը առաջին հերթին կարևորեց ոստիկանության ծառայողի ներքին վերափոխումը և ոստիկանություն-հասարակություն կապի ամրապնդումը: «Անհանդուրժող ենք լինելու այն ոստիկանի հանդեպ, ով քաղաքացուն ականջալուր չի լինում», -ասաց ոստիկանապետը: Նա նշեց, որ այսուհետ մարզերի, գյուղերի, գյուղապետերի ու դպրոցների հետ շփումները կլինեն անավել ակտիվ: Ոստիկանության եւ հասարակության համագործակցությունը սերտացնելու, ոստիկանության հանդեպ բնակչության վստահությունն ամրապնդելու եւ հանցագործությունների կանխարգելման միջոցառումներն առավել արդյունավետ դարձնելու գործում կարևորվեց համայնքային ոստիկանության ստեղծումը, որի շրջանակներում համայնքներում կստեղծվեն ոստիկանական հենակետեր: Ոստիկանության պետը կարևոր համարեց նաև երիտասարդ կադրերի հետ տարվող հետևողական աշխատանքը, արմատական բարեփոխումները հասարակությանը սպասարկող ծառայությունների աշխատանքում: Չէ որ ոստիկանը այն մարդն է, ով իր կյանքի գնով կարող է պաշտպանել քաղաքացուն: Վ. Գասպարյանը անդրադարձավ նաև ճանապարհային երթևեկության կանոններին, նշելով, որ դրանք շատ կարևոր են և, որ բազմաթիվ քաղաքացիներ զոհ են գնում կամ դառնում հաշմանդամ դրանց չհետևելու արդյունքում: Այդ իսկ պատճառով հատկապես քաղաքային համայնքներում և մայրուղիներում համապատասխան կազմակերպությունները պետք է գումար չխնայեն և մշտապես թարմացված վիճակում պահեն ճանապարհային նշաններն ու գծանշանները:

Վերջում Ոստիկանության պետը պատասխանեց դահլիճում ներկա գտնվողների հարցերին և դրանց տվեց սպառիչ պատասխաններ:



Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ